ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՂՈՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՄԵՐՈՒԺԱՆԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԺԳ. 00.01 « Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատավել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Ա. Մկոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Ա. Օ. Թոփուզյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու դոցենտ՝ Մ. Ասատրյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է փետրվարի 28 -ին, ժամը 14:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2017թ. Հունվարի 27-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Հ. Սվաջյան

5. To define actions which contribute the formation of skills and abilities of a pedagog-counsellor. 6. To substantiate the role and significance of pedagogical consultation in the sphere of teachers in the formation of a new professional thinking process.

The base of the research: Experimental work was carried out on the basis of number 3, 6, 15, 29 Gyumri schools and high school of the BeniaminShirak region of Armenia. In research took part 203 teachers, 143 students, 150 parents and 35 students.

The content of the research is reflected in structure of the dissertation which consists of an introduction, three chapters, conclusion, bibliography, appendix.

The scientific innovation of the research:

1. The philosophical, didactic, axiological, psychological bases of the pedagogical consultation are studied and analyzed.

2 The conditions and means which are necessary for the realisation of the pedagogical consultation are defined.

3. Are developed a model for the implementation of the pedagogical counseling, consisting of controls, organizations, interactions, based on moderation technology and psychodrama.

4. In regional context are scientifically analyzed the results of experiment of the pedagogical counseling and the importance of consultation has been stated in the educational process.

The theoretical value of the research :

1. Theoretical and conceptional approaches are considered and analized which allow to overcome different difficulties arisen in separate stages of educational process.

2. The counseling forms and models which are aimed at overcoming the existing problematic situations in educational activities in regional context have been studied.

The practical value of the research

1. Educational cards, software packages are worked out which reflect the algorithm of the actions of didactic, family and correcting consultations-spent with teachers, parents, schoolchildren.

2. Different activities of individual and group consultations have been separated in practice which facilitate the consultation process.

3. Practical recommendations for subjects of teaching and educational process of schools have been worked out.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Հասարակության կյանքում կատարվող արմատական փոփոխություններն արտահայտվում են հասարակական կյանքի ժողովրդավարացման տարբեր բնագավառներում: Հասարակության յուրաքանչյուր անդամի անձնական պատասխանատվությունն ու ակտիվության բարձրացումը շրջադարձային դեր են կատարում կրթական համակարգի նոր կողմնորոշիչների ձեռքբերման գործում:

Կրթական համակարգի զարգացումը բնութագրվում է շարունակական փոփոխությունների ընթացքով, որոնք ենթադրում են ուսումնական գործունեության վերակառուցման արմատական փոփոխություններ ոչ միայն ուսուցման գործընթացում՝ աշակերտների գիտելիքների որակի բարձրացման առումով, այլև բուն դաստիարակչական աշխատանքում:

Մանկավարժի գործունեությանը բնորոշ մասնագիտական դժվարությունները համալրվում են նոր խնդրահարույց երևույթներով, որոնց առաջացման պատճառներից են՝ ուսումնական ծրագրերի ծանրաբեռնվածությունը, աշակերտների ուսման մոտիվացիայի անկումը, որոշ համայնքային նշանակության դպրոցներում բազմահամակազմային դասարանների առկայությունը, սոցիալական բևեռացումը, դեռահասների միջավայրի կոնֆլիկտները, ընտանեկան դաստիարակության բացթողումները:

Այս բոլոր դժվարությունները և հակասությունները կրթության ոլորտում առաջ են բերում որոշակի հիմնախնդիրների ձևավորում, որոնք պահանջում են հրատապ լուծում: Նման իրավիճակների առկայությունը պայմանավորում է այն ոլորտի գործունեության արդիականությունը, որը կարելի է ընդունել որպես մանկավարժական խորհրդատվության գիտա-մեթոդական գործունեություն հանրակրթական համակարգում: Այս տեսանկյունով դիտարկելով հիմնախնդիրը՝ առանձնացրել ենք որոշակի մոտեցումներ ուսուցման գործընթացի բոլոր սուբյեկտների գործունեության մեջ առկա արգելքների բնույթը և դրանց հաղթահարման ուղիները քննարկելիս: Նման խնդիրներ դիտարկվել են մի շարք մանկավարժագետների (Վ. Ա. Սլաստյոնին, Վ. Ի. Ալյոշնիկավա, Վ. Ի. Կազարնկով, Տ. Բ. Կազարենկովա, Ե. Կոուլշեդ և այլն) կողմից:

Սակայն նրանք չեն անդրադարձել այն պայմաններին և միջոցներին, որոնք հնարավոր կդարձնեն այդ խորհրդատվության իրականացումը:

Հիմնվելով նշված հեղինակների աշխատանքների վրա, հաշվի առնելով մեր կրթական համակարգի առանձնահատկությունները՝ մեր կողմից բացահայտվել են այն անհրաժեշտ պայմաններն ու միջոցները, որոնք կապահովեն մանկավարժական խորհրդատվության իրականացումը Մեր կարծիքով, բավարարելով այդ պայմաններն ու միջոցները, կարելի է իրավիճակային մոտեցման շրջանակներում ակտիվացնել թե՝ մանկավարժի՛ թե՝ ծնողի գործունեությունը՝ ուղղված երեխայի ճանաչողական և անհատական զարգացման գործընթացի կազմակերպմանը և ուղղորդմանը: Մանկավարժական խորհրդատվությունը ենթադրում է մասնագիտական գործունեության կարծրատիպերի հաղթահարում, որոնք խոչընդոտում են նոր մեթոդներին համապատասխան մասնագիտական պահվածքի ձևավորումը: Սրանով է պայմանավորված այս թեմայի հրատապությունը::

Հետազոտության նպատակը

Հանրակրթական համակարգում մանկավարժական խորհրդատվության հիմունքների մշակումն է՝ ուղղված կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության օբյեկտը

Հանրակրթության ոլորտում մանկավարժական խորհրդատվության իրականացման գործընթացն է:

Հետազոտության առարկան

Հանրակրթության ոլորտում գործընթացային խորհրդատվության իրականացման պայմանների ու միջոցների մշակումն է և դրանց կիրառման հիմնավորումը:

Հետազոտության վարկածը այն ենթադրությունն է,

- որ մանկավարժական խորհրդատվության կառուցվածքային և գործառութային բաղադրատարրերի փոխհամաձայնեցված գործողությունների իրականացման դեպքում հնարավոր կլինի ապահովել մանկավարժական գործընթացի մասնակիցների գիտամեթոդական ուղղորդումը
- որ խորհրդատվության արդյունքում տարանջատվելու են մանկավարժական գործընթացի բոլոր կողմերը, որը հնարավորություն կտա՝

ANAHIT ZADOYAN

CONDITIONS AND WAYS OF REALIZATION PEDAGOGICAL CONSULTATION IN GENERAL EDUCATIONAL SYSTEM

Dissertation submitted to obtain PhD in Pedagogical Sciences within the specialty "The Theory and History of Pedagogy "13.00.01.

The defence of the thesis will be held on 27. 01. 2017 at 12.00 at session of Degree-awarding Specialized Scientific Council 020 at Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, st. Tigran Mets 17, Yerevan.

SUMMARY

The relevance of the research .The development of the education system is characterized by a process of continuous change. Specific activity of the teacher professional difficulties are replenished with new controversial phenomena whose causes are. the decrease of schoolchildren's learning motivation, interactive teaching methods, the availability of complete classes in some schools, deepening of the social stratification of society, the cost of family education, conflicts emerging in the youth environment, and so on. All these difficulties and contradictions in the sphere of education leads to an accumulation of problems that require intervention. The need for such intervention leads to the relevance of the specific scope, which can be formulated as a pedagogical counseling in the education system. Educational counseling involves overcoming stereotypes of professional work, which prevent the formation of an adequate new methods of professional school conduct.

The aim of the research: Development of bases of the counseling process to improve the efficiency of the educational process in a comprehensive system.

The objectives of the research:

1.To find out character of the difficult situation, arisen in educational process and to find decisions to overcome these situations by means of pedagogical consultation. 2. To develop forms of educational actions of "difficult teenagers" as the help to class- master and parents, underlining significance of these actions in educational process. 3. To determin all possible conditions and means which will provide the realisation of pedagogical consultation. 4. To find out teachers who have qualities which correspond to the role of a pedagog-consultant in pedagogical staff.

5. Выявить действия, которые способствуют образованию навыков и умений педагога-консультанта. 6. Обосновать роль педагогического консультирования для формирования нового мышления у педагогов.

База исследования

Экспериментальные работы были проведены на базе школ № 3, 6, 15, 29 г.Гюмри и Бениаминской средней школы Ширакского марза РА. В исследованиях принимали участие 203 педагога, 143 ученика, 150 родителей.

Содержание исследования. Отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии, приложения..

Научная новизна исследования

1. Исследованы и проанализированы философские, дидактические, аксеологические и психологические основы педагогического консультирования. 2. Определены условия и средства, которые необходимы для реализации педагогического консультирования 3. Разработана модель для реализации педагогического консультирования, состоящая из элементов управления, организации, интеракции, на основе которого технологий модераций и психодрамы. **4.** В региональном контексте научно проанализированы итоги эксперимента педагогического консультирования и обоснован значение консультирования для повышения эффективности в процессе обучения.

Теоретическое значение исследования

1.Рассмотрены и проанализированы теоретические и концепционные подходы, которые позволяют преодолеть разные трудности, возникающие на отдельных этапах учебной деятельности. 2. В региональном контексте исследованы формы консультирования, направленные на преодоление проблемных ситуаций, существующих в воспитательной деятельности.

Практическое значение исследования.

Разработаны учебные карты, программные пакеты, которые отражают алгоритм действий консультирования субъектов педагогического процесса. 2. Практически разделены этапы деятельности индивидуального и группового консультирования, что облегчает процессное консультирование. 3. Разработаны практические рекомендации для субъектов учебно-воспитательного процесса школы, в том числе для классных руководителей.

ա) ապահովել մանկավարժի գործունեության համապատասխանությունը արդի պահանջներին, բ) ժամանակին արձագանքել մանկավարժների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած հիմնահարցերին, գ) հաղթահարել ուսումնադաստիարակչական գործընթացում առաջացող դժվարությունները, դ) ձևավորել ուսուցման արդյունավետությանը նպաստող մասնագիտական միջավայր:

Գիտական վարկածից և հետազոտության նպատակից բխում են ներքոհիշյալ խնդիրները:

1. Բացահայտել ուսուցման գործընթացում առաջացող խնդրահարույց իրավիճակների բնույթը և որոշել մանկավարժական խորհրդատվության միջոցով դրանց հաղթահարման ուղիները:
2. Մշակել «դժվար դեռահասի» հետ տարվող դաստիարակչական խորհրդատվության ձևերը՝ որպես օգնություն դաստղեկին և ծնողին, ցույց տալով այդ գործողությունների նշանակությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներում:
3. Որոշել այն հնարավոր պայմաններն ու միջոցները, որոնց առկայությունը կապահովի մանկավարժական խորհրդատվության իրականացումը:
4. Բացահայտել մանկավարժական հանրույթներում սոցիալական շփման կարողություններով և հեղինակություն վայելող մանկավարժներին, որոնք կարող են հանդես գալ որպես մանկավարժ-խորհրդատուներ:
5. Սահմանել այն գործողությունները, որոնք նպաստում են մանկավարժ-խորհրդատուների մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:
6. Հիմնավորել մանկավարժական խորհրդատվության դերն ու նշանակությունը մանկավարժների մեջ նոր մասնագիտական մտածողության ձևավորման գործում:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության մեթոդներն են թեմային առնչվող գիտատեսական, գիտամեթոդական գրականության վերլուծությունը, դիտումը, զրույցը, անկետավորումը, ախտորոշող թեստավորումը, սոցիոչափումը:

Հետազոտության բազան

Փորձարարական աշխատանքներն իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի թիվ 3 ավագ, թիվ 6, 15, 29 հիմնական, Բենիամին գյուղի միջնակարգ դպրոցների բազայի վրա: Հետազոտությանը մասնակցել են 203 ուսուցիչ, 143 աշակերտ, 150 ծնող:

Հետազոտության գիտական նորույթը

1. Ուսումնասիրվել և վերլուծվել են մանկավարժական խորհրդատվության փիլիսոփայական, դիդակտիկ, արժեբանական և հոգեբանական հիմքերը: 2. Բացահայտվել են մանկավարժական խորհրդատվության իրականացման համար անհրաժեշտ պայմաններն ու միջոցները: 3. Մշակվել է մանկավարժական խորհրդատվության իրականացման մոդել՝ բաղկացած կազմակերպչական, կառավարման, փոխներգործուն տարրերից, որի հիմքում ընկած են մոդերավորման և դերախաղային տեխնոլոգիաները: 4. Գիտական վերլուծության են ենթարկվել տարածաշրջանային համատեքստում մանկավարժական խորհրդատվության փորձարարական իրականացման արդյունքները և հիմնավորվել է խորհրդատվության դերը կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում:

Հետազոտության տեսական նշանակությունը

1. Դիտարկվել և վերլուծվել են տեսական ու հայեցակարգային այն մոտեցումները, որոնք թույլ են տալիս հաղթահարել ուսուցման գործընթացի տարբեր փուլերում առաջացող տարաբնույթ դժվարությունները:

2. Ուսումնասիրվել են տարածաշրջանային համատեքստում դաստիարակչական աշխատանքներում առկա խնդրահարույց իրավիճակների հաղթահարմանն ուղղված խորհրդատվության ձևերը:

Հետազոտության գործնական նշանակությունը

1. Մշակվել են ուսուցողական քարտեր, ծրագրային փաթեթներ, որոնք արտացոլում են մանկավարժների, ծնողների, դժվար դեռահասների հետ տարվող խորհրդատվության հաջորդականությունը

2. Գործնականում առանձնացվել են խորհրդատվության անհատական և խմբային ձևերի տարբեր փուլերը, որոնք ավելի դյուրին են դարձնում գործընթացային խորհրդատվությունը

3.Մշակվել են գործնական հանձնարարականներ դպրոցի դաստիարակության

ЗАДОЯН АНАИТ МЕРУЖАНОВНА

УСЛОВИЯ И СПОСОБЫ РЕАЛИЗАЦИИ ПЕДАГОГИЧЕСКОГО КОНСУЛЬТИРОВАНИЯ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00. 01-‘’Теория и история педагогики’’

Защита диссертации состоится в 27.01. 2017г. в 12.00 на заседании специализированного совета 020 ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Развитие системы образования характеризуется процессом непрерывных изменений. Специфичные для деятельности педагога профессиональные затруднения пополняются новыми спорными явлениями, причинами которых являются: нагрузка учебных программ, спад учебной мотивации учеников, наличие комплектных классов в некоторых школах, углубление социального расслоения общества, издержки семейного воспитания, конфликты формирующиеся в среде подростков и т.д. Все эти затруднения и противоречия в сфере образования приводят к накоплению проблем, которые требуют вмешательства. Необходимость такого вмешательства обусловливает актуальность деятельности специфической сферы, которую можно сформулировать как педагогическое консультирование в системе образования. Педагогическое консультирование предполагает преодоление стереотипов профессиональной деятельности, которые препятствуют формированию адекватного новым методам профессионального поведения.

Цель исследования. Разработка основ процесса консультирования для повышения эффективности учебно-воспитательного процесса в общеобразовательной системе.

Задачи исследования

1. Выявить характер сложных ситуаций, возникших в учебном процессе и с помощью педагогического консультирования найти решения для преодоления этих ситуаций. 2. Разработать формы воспитательной деятельности, направленные на решение проблемы «сложного» подростка как помощь классному руководителю и родителям, подчеркивая значение этих действий в учебно-воспитательном процессе. 3. Определить возможные условия и средства, которые обеспечат реализацию педагогического консультирования. 4. Обнаружить среди педагогов представителей, которые имеют профессиональные качества, специфичные для педагога-консультанта.

գործընթացի կառավարման ենթահամակարգերի, այդ թվում դասղեկների համար:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Մանկավարժական խորհրդատվության դիդակտիկ բաղադրատարրի իրականացումը ապահովում է դասավանդման գործընթացում առկա մասնագիտական դժվար իրավիճակների հաղթահարումը, դառնալով ուսուցման որակի բարձրացման գործոն:

2.. Ծնողների հետ տարվող խորհրդատվությունը հնարավորություն է ստեղծում իրականացնելու ծնողական դաստիարակության սխալների ուղղում, նվազեցնելու ծնող-երեխա, ծնող-ուսուցիչ կոնֆլիկտները :

3. Մանկավարժների հետ տարվող խորհրդատվության կազմակերպումը նպաստում է մանկավարժական հանրույթներում տիրող լարվածության վերացմանը, կրթական հաստատություններում առողջ բարոյա-հոգեբանական միջավայրի ստեղծմանը:

4. Մանկավարժական խորհրդատվության ներդնումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս համագործակցություն իրականացնելու սովորողի հետ, նվազեցնելու մանկական ագրեսիայի դրսևորումները, աջակցելու երեխային նրա զարգացման ճգնաժամային փուլերում, ձևավորելու նրա մեջ կայուն արժեքային համակարգ

5. Մանկավարժական խորհրդատվության արդյունքում մանկավարժների մեջ ձևավորվում է մասնագիտական նոր մտածողություն:

Հետազոտության փուլերը

Հետազոտությունն անցկացվել է չորս փուլով:

Առաջին փուլում (2008-2010թթ.) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին վերաբերող գրականությունը, հստակեցվել են ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման վերաբերյալ մոտեցումները: Առաջադրվել է վարկածը, առանձնացվել են հետազոտական մեթոդները:

Երկրորդ փուլում (2010-2011թթ.) իրականացվել են ուսումնասիրություններ դասղեկների, աշակրտների, ծնողների շրջանում՝ պարզելու նրանց համատեղ գործունեության ընթացքում դրսևորվող խնդրահարույց իրավիճակները: Կատարվել են փորձարարական

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1 Զադոյան Ա. Մ., Կարապետյան Վ. Ս. Մանկավարժական խորհրդատվության հիմնական գործառույթները հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում: Կրթական բարեփոխումների հոգեբանական հիմնահարցեր: Եր.,: «Մանկավարժ» 2008-էջ 79-85

2. Զադոյան Ա. Մ. Մանկավարժական խորհրդատվության դերը ուսուցչի մանկավարժական մշակույթի ձևավորման գործում, «Մանկավարժական միտք» Տաթև գիտա-կրթական համալիր, Եր.: «Զանգակ» 2012-էջ 27-33

3. Զադոյան Ա. Մ. Մանկավարժական խորհրդատվության դերը դաստիարակչական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում, «Մանկավարժական միտք» Տաթև գիտա-կրթական համալիր, Եր.: «Զանգակ» 2014-էջ 32-37

4 Զադոյան Ա. Մ. Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիրք», Պրակ Բ, Հումանիտար և հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ Գյումրի 2014 №1, էջ187-195

5. Զադոյան Ա. Մ. Բազմահամակազմային դասարաններում ուսուցման դժվարությունները և դիդակտիկ խորհրդատվության դերը դրանց հաղթահարման գործում, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիրք», Պրակ Բ, Հումանիտար և հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ: Գյումրի 2015 №1, էջ 87-96

6. Զադոյան Ա. Մ. Մանկավարժական խորհրդատվության դերը ընտանեկան դաստիարակության թերացումների շտկման գործում, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, գիտական հոդվածներ 2016- 2 (45), էջ 209-212

7. Զադոյան Ա. Մ. Մանկավարժ-խորհրդատուն որպես կրթական գործընթացի գիտամեթոդական ուղեկցորդ, ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու (2012 թ. Դեկտեմբերի 14) I Պրակ ՀՊՄՀ Երևան «Մանկավարժ» հրատ. 2013-էջ 405-409

աշխատանքներ դպրոցի կառավարման ենթահամակարգերի, այդ թվում՝ մանկավարժական հանրույթի գործունեությունը դիտարկելու համար:

Երրորդ փուլում (2011-2012թթ.) իրականացվել է ուսուցողական փորձարարություն. երկրորդ փուլի արդյունքների հիման վրա ընտրված մանկավարժների հետ անցկացվել են ուսուցողական դասընթացներ, որոնց միջոցով տրվել են մանկավարժական խորհրդատվության վերաբերյալ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ:

Չորրորդ փուլում (2012-2013թթ.) համակարգվել է մանկավարժական փորձարարությամբ ստացված արդյունքների ստուգումը, ձևակերպվել են եզրակացությունները, կատարվել է ատենախոսության ձևավորումը:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված է ատենախոսի գիտատեսական և մեթոդաբանական դիրքորոշումներով, ընթացիկ ու վերջնական արդյունքների քանակական մշակման վիճակագրական մեթոդներով, հետազոտվողների քանակով, ինչպես նաև որպես մանկավարժի անձնական փորձով և գիտափորձին անձնական մասնակցությամբ :

Հետազոտության փորձաքննությունը

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Մ. Նալբանդյանի անվան ԳՊՄԻ մանկավարժության տեսություն և պատմություն ամբիոնում, առանձին դրույթներ զեկուցվել են ԳՊՄԻ գիտաժողովներում (2008-2013թթ.), ինչպես նաև «Կրթության բարեփոխումների հոգեբանական հիմնահարցեր» թեմայով միջազգային գիտաժողովում (2008թ, նոյեմբերի 15-16), «Կրթության բարեփոխումներ, հիմնախնդիրներ» թեմայով հանր. Գիտաժողովում (ք. Վանաձոր 8 ապրիլի 2010թ):

Հետազոտության արդյունքներն արտացոլվել են հիմնախնդրի վերաբերյալ տպագրած հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, հավելվածից և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության արդիականությունը,

խորհրդատուի պատրաստումը ԲՈՒՀ-ում, 4. դրակա՞ն եք գնահատում ՄԽ-ընդունելու մանկավարժների պատրաստակամությունը 5. ՄԽ-ի անհրաժեշտությունը պայմանավորվա՞ծ է մասնագիտական գործունեության մեջ առկա օբյեկտիվ դժվարություններով, 6. ՄԽ-ից հետո կատարվե՞ց փոփոխություն ձեր մասնագիտական գործունեության մեջ, 7. ՄԽ-ից հետո կատարվե՞ց փոփոխություն աշակերտների ուսման մոտիվացիայում:

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ մանկավարժները կարևորում են մանկավարժական խորհրդատվության անհրաժեշտությունը կրթական բարեփոխումների ներկա փուլում, շեշտելով նրա նշանակությունը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման մեջ:

Գրականության տեսամեթոդական վերլուծությունների և փորձարարական ուսումնասիրությունների հիման վրա հանգում ենք հետևյալ **եզրակացությունների.**

1. Հետազոտության արդյունքում բացահայտվեցին մանկավարժական գործընթացում առկա խնդրահարույց իրավիճակները՝ կապված դասավանդման ժամանակ առաջացող բարդությունների հետ, հիմնավորվեցին դիդակտիկ խորհրդատվության օգնությամբ դրանց հաղթահարման ուղիները:
2. Մշակվեցին «դժվար դեռահասի» հետ տարվող դաստիարակչական խորհրդատվության ձևերը՝ որպես օգնություն դասղեկին և ծնողին:
3. Որոշվեցին այն հնարավոր պայմաններն ու միջոցները, որոնց առկայությունը ապահովելու էր մանկավարժական խորհրդատվության իրականացումը:
4. Սոցիոչափման և ախտորոշող թեստավորման միջոցով մանկավարժական հանրույթներից ընտրվեցին մանկավարժ-խորհրդատուի դերում հանդես գալու ընդունակ որակներով օժտված մանկավարժները:
5. Հստակեցվեցին մանկավարժ-խորհրդատուի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործողությունները՝ ուսուցողական դասընթացները, որպես մանկավարժական խորհրդատվության իականացման անհրաժեշտ միջոց:
6. Մանկավարժների շրջանում անցկացված ստուգիչ գիտափորձով փաստարկվեց ՄԽ-ի ազդեցությամբ մանկավարժների նոր մասնագիտական մտածողության ձևավորման մեխանիզմը:

ծնողների վերաբերմունքում դրական տեղաշարժ, բ) ընտանեկան դաստիարակության դժվարությունների նվազում, գ) ծնողական վերահսկողության աճ, դ) ծնող-երեխա հաղորդակցության ակտիվացում, ե) դպրոց-ընտանիք համագործակցության կարևորում: Աշակերտների շրջանում անցկացվեց անկետավորում, որի արդյունքների համեմատական վերլուծությունից պարզվեց, որ նկատվել է. ա) ուսման դդապատճառների աճ, բ) դպրոցի նկատմամբ դրական տրամադրվածության աճ, գ) ուսուցիչ-աշակերտ հակասությունների նվազում, դ) ծնող-երեխա տարաձայնությունների նվազում (տես աղ.4):

Աշակերտների դժվարությունների ցուցանիշների համեմատությունը **Աղ.4**

Պատասխաններ	Հարցերի ուղղությունները Պատասխանած աշակերտների թիվը (ընդամենը 143 աշակերտ)													
	1.Վերաբերմունքը ուսման հանդեպ		2.Վերաբերմունքը դպրոցի հանդեպ		3. Ուսուցչի կերպարի իր պատկերացումը		4.Դասապրացեսի ընթացքի գնահատականը ըստ աշակերտի		5.Ընտանիքի անդամների հետ փոխհարաբերությունները.		6.Ընտանիք-դպրոց փոխհարաբերությունը		7.Դասընկերների հետ փոխհարաբերությունները	
	առաջ	հետո	առաջ	հետո	առաջ	հետո	առաջ	հետո	առաջ	հետո	առաջ	հետո	առաջ	հետո
դրական	33	48	37	58	58	65	38	51	35	45	23	43	28	45
միջին	65	67	59	55	44	46	43	45	65	65	68	63	75	65
բացաս	45	28	47	30	41	32	62	39	43	33	52	37	40	33

4. Մանկավարժների հետ անցկացվեց անկետավորում՝ միտված պարզելու նրանց կարծիքը ՄԽ-ի անհրաժեշտության մասին (տես տր. 8):



Տրամագիր 8 Մանկավարժների կարծիքը մանկավարժ. խորհրդատվութ. վերաբերյալ

Հարցերն ունեին հետևյալ ուղղությունները 1. ընդունու՞մ եք ՄԽ-ի անցկացման անհրաժեշտությունը, 2. կարո՞ղ է ՄԽ-ն դառնալ այլընտրանք մեթոդական աշխատանքների ավանդական ձևերին, 3. Ճի՞շտ եք համարում մանկավարժ-

հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **«Մանկավարժական խորհրդատվության գործընթացի գիտատեսական հիմնավորումը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ **«Մանկավարժական խորհրդատվության՝ որպես կրթական գործընթացի ոլորտի գիտամեթոդական մեկնաբանումը»** ենթագլխում դիտարկվել են ՄԽ-ի իրականացման սկզբունքները, այդ թվում՝ համակարգվածության, հետևողականության, մասնագիտական էթիկայի, անձնային-սոցիալական մոտեցման սկզբունքները: Ներկայացվել են ՄԽ-ի գործառույթները, որոնց թվում՝ ա) մանկավարժական հանրույթի մասնագիտական գործունեության ձևերի, մեթոդների, տեխնոլոգիաների մասին գիտելիքների հարստացումը, բ) գիտական հետազոտության արդյունքների, առաջավոր մանկավարժական փորձի ներդնումը պրակտիկայում և կրթական գործընթացի վրա դրանց ունեցած ազդեցության վերլուծությունն ու գնահատումը, գ) մասնագիտական որակների ձևավորման ուղղությամբ տեղեկատվական, տեխնոլոգիական, գիտամեթոդական աջակցության ապահովումը: Դիտարկվել և վերլուծվել են ՄԽ-ի բաադրատարրերը:

Երկրորդ՝ **«Ուսուցման գործընթացի խնդրահարույց իրավիճակները և դրանց հաղթահարմանն ուղղված դիդակտիկ խորհրդատվության նպատակը, խնդիրները և ընթացքը»** ենթագլխում ներկայացվել են ուսուցման գործընթացում առկա մասնագիտական դժվար իրավիճակների ձևավորման պատճառները, դրանցից բխող հետևանքները և հաղթահարման միջոցները: Առանձնացվել և վերլուծվել են առարկայական, մեթոդական և հոգեբանական բնույթի դժվարությունները, դրանց ձևավորմանը նպաստող գործոնները: Հիմնավորվել է այդ դժվարությունների հաղթահարման գործում դիդակտիկ խորհրդատվության նշանակությունը:

Երրորդ՝ **«Մանկավարժական խորհրդատվություն՝ ուղղված մանկավարժական գործընթացում կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարմանը»** ենթագլխում տեսական մոտեցումների, հետազոտության արդյունքների հիման վրա դիտարկվել են մանկավարժական գործունեության կոնֆլիկտային

իրավիճակների բնույթը, ուղղվածությունը, դրսևորման առանձնահատկությունները: Ներկայացվել են տարբեր իրավիճակներին համապատասխան մանկավարժական խորհրդատվության ձևերը:

Ատենախոսության **«Մանկավարժական խորհրդատվության մեթոդների և տեխնոլոգիաների տեսական վերլուծությունը»** ենթագլխում տեսական վերլուծությունների, հետազոտության տվյալների հիման վրա ներկայացվել և վերծանվել են մանկավարժական խորհրդատվության իրականացման ձևերը, տեխնոլոգիաները և մեթոդները: Տրվել են մոդերավորում, սուպերվիզիա տեխնոլոգիաների ընդհանուր բնութագրերը և տիպաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մանկավարժական խորհրդատվության կազմակերպման պայմանների և գործոնների փորձարարական հետազոտությունը»** գլխի առաջին ենթագլխում բացահայտվել են ա) ուսուցիչների, դաստղեկների աշխատանքում առկա խնդրահարույց իրավիճակները, բ) ուսուցիչների հուզականային որակները և ագրեսիվության դրսևորումները, գ) մանկավարժական հանրույթում համախմբվածության-մասնատվածության աստիճանը, դ) սոցիալական շփման կարողություններով օժտված մանկավարժները, որոնք կարող են դառնալ խորհրդատուներ, ե) սկսնակ խորհրդատուների ապրումակցման, հաղորդակցման և կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության որակները:

Երկրորդ՝ **«Մանկավարժական խորհրդատովթյան փորձարարական ուսումնասիրությունը աշակերտական կոլեկտիվում»** ենթագլխում դիտարկվել և վերլուծվել են աշակերտների շրջանում իրականացրած հետազոտությունները, որոնց միջոցով պարզվել են սովորողի՝ ա) վերաբերմունքը ուսման հանդեպ, բ) կողմից ուսուցչի կերպարի պատկերացումը, գ) կարծիքով դասի գործընթացի ցածր արդյունավետության պատճառը, դ) փոխհարաբերությունը դասընկերների հետ :

Երրորդ՝ **«Մանկավարժական խորհրդատվության անցկացման փորձարարական ուսումնասիրությունը ծնողների շրջանում»** ենթագլխում ներկայացվել են ծնողների հետ անցկացրած գրավոր հարցումները, որոնց միջոցով պարզվել են. ա) ծնողների կողմից մանկավարժների աշխատանքի գնահատականը, բ) դպրոց-ընտանիք փոխհարաբերությունը, գ) երեխայի պահվածքը ընտանիքում, դ) ծնող-երեխա հաղորդակցությունը :



Տրամագիր 6 Ուսուցիչների հուզականային որակների ցուցանիշները մանկավարժական խորհրդատվությունից առաջ



Տրամագիր 7 Ուսուցիչների հուզականային որակների ցուցանիշները մանկավարժական խորհրդատվությունից հետո

Արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ նկատվեց աճ. շփվողականություն (23-40), հուզական կայունություն (21-41), արտահայտչականություն (19-42), բարձր նորմատիվ վարք (19-40), զարգացած երևակայություն (22-41), ինքնավստահություն (30-45), զիջողականություն (14-32), ռադիկալիզմ (16-42), բարձր ինքնահսկողություն (9-42), ինքնագնահատականի համապատասխանություն (23-46) որակներով ուսուցիչների թվակազմում (արտ. %) :

Ծնողների հետ անցկացվեց անկետավորում. (տես. աղ. 3)

Ծնողների հարցումների արդյունքները խորհրդատվություն. առաջ և հետո Աղ. 3

Պատ.	Հարցերի ուղղությունները Պատասխանած ծնողների թիվը (ընդամենը 150 ծնող)											
	1. հարց		2. հարց		3. հարց		4. հարց		5. հարց		6. հարց	
	ՄՆ-ից առաջ	ՄՆ-ից հետո	ՄՆ-ից առաջ	ՄՆ-ից հետո	ՄՆ-ից առաջ	ՄՆ-ից հետո	ՄՆ-ից առաջ	ՄՆ-ից հետո	ՄՆ-ից առաջ	ՄՆ-ից հետո	ՄՆ-ից առաջ	ՄՆ-ից հետո
դրակ.	33	50	28	40	30	43	32	39	23	51	23	58
միջին	69	63	68	73	80	77	75	81	47	62	87	65
բացաս.	48	37	54	37	40	30	43	30	30	37	40	27

Արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ նկատվել է. ա) դպրոցի հանդեպ

Արդյունքներից պարզվեց, որ մանկավարժ-խորհրդատուները մասնագիտական փորձի հարստացման (3) և դասղեկի աշխատանքում առկա դժվարությունների հաղթահարման (6) գործում համարժեք են գնահատում խորհրդատվության երկու ձևերն էլ, իսկ ուսուցման գործընթացի մյուս՝ մանկավարժական խնդրահարույց (1), մասնագիտական պահվածքի ձևավորման (2), ագրեսիվ վարքով երեխաների հետ կապված (4) ընտանիքում արդյունավետ փոխհարաբերությունների ձևավորմանը միտված (5) դասավանդման ժամանակ առկա դժվարությունների հաղթահարմանն ուղղված (7) իրավիճակներում բարձր են գնահատում անհատական խորհրդատվությունը:

3. Խորհրդատվության արդյունավետությունը պարզելու համար կատարվեց. ա) ուսումնանորմատիվային փաստաթղթերի (տես աղ.2), բ) մանկավարժների հուզակամային որակների (տես տր.6,7), ծնողների՝ անկետավորման (տես աղ.3) խորհրդատվությունից առաջ և հետո գրանցված արդյունքների համեմատական վերլուծություն

Ուսումնանորմատիվային ցուցանիշների համեմատությունը **Աղ. 2**

Ուսումնանորմատիվային ցուցանիշները	դպրոցներ									
	թիվ 3		թիվ 6		թիվ 15		թիվ 29		Բենիամինի	
	նախքան ՄԽ	ՄԽ-ից հետո	նախքան ՄԽ	ՄԽ-ից հետո	նախքան ՄԽ	ՄԽ-ից հետո	նախքան ՄԽ	ՄԽ-ից հետո	նախքան ՄԽ	ՄԽ-ից հետո
առաջադիմություն (%)	97	99	90,2	91,3	95	96	95	95,5	83,9	85
որակային առաջադիմություն (%)	35	35	55	55	37	38	37,8	38	21,2	23
բացակայությունների թիվը	2505	2315	28 96	2515	5043	4754	3942	3900	2782	2577

Արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ կատարվել է առաջադիմության, որակային առաջադիմության աճ, բացակայությունների թվի նվազում:

Մանկավարժների հետ անցկացվեց հուզակամային որակների թեստավորում ըստ Ա. Քեթթելի 17 սանդղակի (տես տր. 6,7):

«Երկրորդ գլխի արդյունքների ամփոփում» ենթագլխում վերլուծվել են գիտափորձերի արդյունքները, և մշակվել են մանկավարժական խորհրդատվության իրականացման անհրաժեշտ պայմանները՝ 1. խորհրդատուի արհեստավարժությունը, 2. խորհրդատվության ձևերի ճիշտ ընտրությունը, 3. խորհրդատվության արդյունավետության հիմնավորումը, 4. խորհրդատվություն ընդունելու պատրաստակամությունը խորհրդառուի կողմից:

Ատենախոսության երրորդ՝ **«Ուսուցողական և ստուգողական գիտափորձերի մեթոդիկան, ընթացքը և հիմնական արդյունքները»** գլխում քննարկվել է ուսուցողական և ստուգողական գիտափորձերի նախապատրաստական և հիմնական փուլերում կատարված աշխատանքները:

«Ուսուցողական գիտափորձերի մեթոդիկան, ընթացքը և հիմնական արդյունքները» ենթագլխում ներկայացվել են սեմինար և գործնական պարապմունքների նկարագրությունը: Գործնական պարապմունքների ժամանակ քննարկումների, բանավեճերի, գործնական խաղերի ձևով բացահայտվել են մանկավարժական այն իրավիճակները, որոնք առկա են արդի կրթական համակարգում:

«Ստուգողական գիտափորձերի մեթոդիկան, ընթացքը և հիմնական արդյունքները» ենթագլխում ստուգվել են մանկավարժ-խորհրդատուների ստացած գիտելիքների գործնականում իրականացման մակարդակը, այդ թվում՝ այն պայմանների ձևավորվածությունը, որոնք ապահովելու են մանկավարժական խորհրդատվության իրականացումը՝

1. սկսնակ մանկավարժ-խորհրդատուների ա) ապրումակցման, բ) հաղորդակցման, գ) կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ընդունակության որոշումը՝ որպես խորհրդատուի արհեստավարժության ցուցանիշ:

Մանկավարժ-խորհրդատուների ապրումակցման ընդունակության պարզմանն ուղղված թեստավորման (ըստ Ա. Մեհրաբյանի և Ն. Էպշտեյնի) արդյունքների համեմատական վերլուծությունը պարզեց, որ ուսուցողական դասընթացից հետո նվազեց ապրումակցման ցածր շեմ ունեցող մանկավարժ-խորհրդատուների ցածր տոկոսը հետազոտվող բոլոր դպրոցներում և աճեց բարձր արժեքով մանկավարժ-խորհրդատուների տոկոսը (տես. տր. 1,2):

Փորձարարական խումբ



Տրամագիր 1 Մանկավարժ-խորհրդատուների ապրումակցման ընդունակության որոշումը նախքան ուսուցողական դասընթացը

Ստուգողական խումբ



Տրամագիր 2 Մանկավարժ-խորհրդատուների ապրումակցման ընդունակությունների որոշումը ուսուցողական դասընթացից հետո

Մանկավարժ-խորհրդատուների հետ անցկացվեց կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ընդունակության ախտորոշմանն ուղղված թեստավորում ըստ Կ. Թոմասի, (տես տր. 3,4):

Փորձարարական խումբ



Տրամագիր 3 Մանկավարժ-խորհրդատուների կոնֆլիկտային վարքի բաղադրատարրերի արժեքները (%)

Ստուգողական խումբ



Տրամագիր 4 Մանկավարժ-խորհրդատուների կոնֆլիկտային վարքի բաղադրատարրերի արժեքները (%)

Մանկավարժ-խորհրդատուների կոնֆլիկտային վարքի բաղադրատարրերի արդյունքների համեմատական վերլուծությունից պարզ դարձավ, որ

ուսուցողական դասընթացի արդյունքում թիվ 3, 15, 29 և Բենիամին գյուղի դպրոցների ներկայացուցիչների մեջ նկատելի նվազել են մրցակցություն բաղադրատարրի արժեքները, բարձրացել են համագործակցություն, փոխզիջում բաղադրատարրերի արժեքները, իսկ 6, 15, 29 դպրոցների ներկայացուցիչների մեջ նկատվել է աճ խուսափում, հարմարում բաղադրատարրերի արժեքներում (տես. տր. 3,4):

2. Մանկավարժ-խորհրդատուների շրջանում անցկացվեց գրավոր հարցում՝ միտված պարզելու խորհրդատվության ձևերի ընտրությունը (տես տր. 5):



Տրամագիր 5 Խորհրդատվության ձևերի ընտրության ցուցանիշները